ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ԴՈՓԵԱՆ

(1225? – 1290?)

Յովհաննէս Եպս. Դոփեան մին է Հաղբատի Վանքին երեւելի առաջնորդներէն։ Ան ունեցած է երկարատեւ պաշտօնավարութիւն՝ (1261–1288) և իր օրով վանքը ապրած է բարգաւաճ շրջան մը։ Իր նախորդին՝ Համազասպ Եպիսկոպոսի նման ինքն ալ եղած է շինարար առաջնորդ մը։ Կառուցած է Հաղբատի Գրատունը՝ հանդերձ սրահով և գաւիթով։ Կանգնել տուած է Ամենափրկիչ Խաչարձանը որ շատ ուշագրաւ գործ մըն է արուեստի տեսակէտէն։ Իր թելադրութեամբ Վարդան Արեւելցին գրած է Սաղմոսաց Մեկնութիւնը (1265) և Յովհաննէս Պլուզ շարադրած է «Յաղագս Երկնային Շարժման» աշխատութիւնը (1284)։ Անշուշտ չափով մը իր շնորհիւ է որ այդ շրջանին Հաղբատի Վանքը հարստացած է շատ մը նուիրատուութիւններով՝ Ս. Նշանին միաբանակցող բարեպաշտներու կողմէ ընծայուած։

Յովհաննէս Եպիսկոպոս որդին էր Դոփեան Գրիգոր իշխանին։ Զինքը առաջին անգամ կը տեսնենք 1244–ին, յիշուած իր եղբօր Հասանի հետ։ Իր անունը քանդակուած է բազմաթիւ արձանագրութիւններու մէջ 1261–1288 թուականներուն։ Ստորեւ կը ներկայացնենք այդ արձանագրութիւնները դասաւորուած ժամանակագրական կարգով ըստ կարելւոյն, և տեղտեղ մանր սրբագրութիւններով։ Այս արձանագրութիւնները կարեւոր չափով մը կը պատկերացնեն մեր առջեւ Դոփեան Յովհաննէս Եպիսկոպոսի արդիւնաւոր պաշտօնավարութիւնը։

1.— 1244.— Արդ, որք... ընթեռնոյք և աւգտիք... յիշեցէք առաջի զենման Քրիստոսի, զիս՝ զԳրիգոր և զամուսին իմ զՄա[մք?]ան և զհարազատ որդիքս իմ զՀասան և... զՅոհաննէս... Գործեցաւ ի Թուականութեան Հայոց ՈՂԳ.— Յովսէփեան, Յիշատակարանք Ձեռագրաց, 1951, էջ 960։

2.— 1261.— Ի թվին Ձժ, կամաւն Աստուծոյ ես Նուաստ ծառայ Քրիստոսի, Սարկաւագ վաճառական, որդի Վրթանիսի Գառնեցոյ, ապաւինեցա ի ս. Նշանս Հաղբատայ և կազմեցի Խաչ մի արծաթի ոսկեզաւծ և Բ նափորտ նասիճ, և տալաս վառ. վասն փրկութեան հոգո իմո, և էտու ի ս. ուխտս։ Եւ Եպիսկոպոսս տէր Յովանէս, հանդերձ վարդապետաւքս և միաբանաւքս ընկալան և սահմանեցին ինձ յամենայն ամի Ժ պատարագ յետ ծակամտին Բ կիւրակէին։ Որչափ ես կենդանի եմ իմ ծնողացն առնեն՝ Բ Վըրթանիսի, Բ Աթանասի, Բ Եզեկիէլի, Բ Տիկինմաւրն, և յետ իմ ելից՝ ինձ առնեն։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ և խափանողքն դատին ի Տեառնէ.— Ղաֆադարեան, Հաղբատ, 1963, 166(35)։

3.— 1262.— ՉԺԱ թվին, յառաջնորդութեան տեառն Յովանէսի... Գարբանեցս որդովք իմովք եկի ի ս. ուխտս Հաղբատա և ըստ կարողութեան իմո միաբանեցա ս. Նշանիս և ետու Լ. եզ... և տէր Յովանէս և միաբանքս հաստատեցին մեզ պատարագ զուրբ Գրիգորի տաւնին ամէն զեկեղեցիքս։ Կատարիչք աւրհնին յաստուծոյ.— Նոյն, էջ 212(93)։

4.— Անուամբ բարերարին Աստուծոյ... հարսն Գարբանեցոյ(*) և որդիք իւր Վաչէ

(*) Նկատելով որ «Գարբանեցոյ անունը տեղում դժուարութեամբ է կարդացվում», և Վաչէի և Ծիրյաւսանի հօրը անունը Գարբանէլ կը կարդացուի թ· 25 արձանագրութեան մէջ, մեզի այնպէս կը

digitised by A.R.A.R.@

և Մխիթարեան միաբանեցան Հաղբատա և նուիրեցին ընծայս ս. Նշանին։ Եւ մեք՝ տէր Յովանէս կամակցութեամբ եղբարցս սահմանեցաք նոցա զսուրբ Գրիգորին ուրբաթն աւուն պատարագ զամէն եկեղեցիքս։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ.— Նոյն, էջ 212(94)։

5.— 1267.— Կամաւն Աստուծոյ ես Վարդան Տփխեցի և ամուսին իմ Մինա մեծ յուսով միաբանեցաք եկեղեցոյս և տվաք ընծայ ս. Նշանիս ըստ մերում կարի, և տէր Յովաննէս կամակցութեամբ եղբարցս սահմանեցին մեզ պատարագ ի տաւնի Պետրոսի և Աբիսողոմա զամենայն եկեղեցիքս։ Մեր կենդանութեամբ՝ մեր ծնողացն առնեն և յետ մեր ելից՝ մեզ։ Կատարողքն աւրհնին ի Տեառնէ ամէն. ի թվին ՉԺԶ.— Նոյն, էջ 162(30)։

6.— Ցուսոնն Աստուծոյ միաբանեցաւ Գերզ ս. Նշանիս. մեք տէր Յովաննէս և միաբանքս սահմանեցաք ս. Սարգսին Բարեկենդանին զչաբաթն աւուրն զպատարագ Գերզայ առնեն և իւր հաւրն Սարգսին և մաւրն Թուխթանդին։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ.— Նոյն, էջ 165(33)։

7.— Ազդմամբն Աստուծոյ կոչեցաւ Լուսեղէնն ի միաբանութիւն եկեղեցոյս Հաղբատա. և մեք տէր Յովաննէս լսմամբ եղբարցս առաք նմա Դ պատարագ ի տաւնին Իգնատիոսի հայրապետին, և Բ Գրիգորին։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ՝ ամէն.— Նոյն, էջ 165(34)։

8.— 1267.— Ի թվիս ՉԺԶ. Շնորհիւն Աստուծոյ, Մխիթար քահանա, որդի Աւշինին, սնուցած տէր Յովաննէսի, ես աղիւնս ի չինութեանս սրահայրիկի զդռան կաթողիկէս։ Եւ մեք, տէր Յովաննէս, կամակցութեամբ եղբարցս, սահմանեցաք Բ պատարագ Բարխաւորին ի տաւնին Գարամէի։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ.— Նոյն, էջ 202(70)։

9.— 1273-ից առաջ, թերեւս 1267-ին.— Շնորհաւք Ս. Երրորդութեան և ողորմութեամբ Ս. Նշանիս, ես, տէր Յովաննէս, նուաստ ծառա ծառայից Աստուծոյ, չինեցի զդաւիթս և զգրատունս և զարահ նորին, ածի զպաղատս զլիճն և եռու կաղմել մեծածախ պահարան Ուրդաձորս Ս. Նշանին. գնեցի զդեղն Բաւլա և ընծայեցի Ս. Նշանիս, վասն արեւշատութեան պարոն Սադունին և զաւակաց իւրոց, և յիշատակ ինձ և ծնողաց իմոց և եղբարց, և Սարգիս վարդապետին, և ամենայն արդիւնաւորաց։ Եւ սահմանեցի ծառզարդարին երիցարարացն Բ ոսկիտակ տա ցերէցն։ Եւ միաբանքս եռուն մեզ Զատկի ձրագալուցն մեզ պատարագել՝ Դաւթի, և զկնի ելից մերոց՝ մեզ և Դաւթի.— Նոյն, էջ 213(96)։

10.— 1273.— Շնորհաւք Ս. Երրորդութեանն և ողորմութեամբ Ս. Նշանիս, ես, տէր Յովանէս, նուաստ ծառայս ծառայիցն Աստուծոյ, չինեցի զդաւիթս, զդրատունս և զարահ նորին, ածի զպաղատս զլիճն, և եռու կաղմել զմեծածախ պահարանն Ուրդաձորս Ս. Նշանին, գնեցի զդեղն Բաւլա և ընծայեցի Ս. Նշանիս, կանգնեցի զիսաչս վասն արեւշատութեան աթաբակ ամիրսպասալար պարոն Սադունին և զաւակաց նորա, և յիշատակ անանց ինձ և ծնողաց իմոց և եղբարց, և հոգեւոր որդւոց իմոց Սարգիս վարդապետի։ Այլ և սահմանեցի ծառզարդարին իրիցարարացն Բ ոսկիտակ յերէցն տալ։ Եւ միաբանքս էառն մեզ Զատկին ձրագալոյցն զամէն եկեղեցիքս պատարագել։ Կատարիչքն աւրհնին.— Նոյն, էջ 194(59)։

11.— 1273.— Թվականին ՉԻԲ, յիշխանութեան և ի տէրութեան Ս. Ուխտիս աթաբակ ամիրսպասալար պարոն Սադունին, ես տէր Յովանէս կանգնեցի զիսաչս ամենափրկիչ աղջնական պարոն Սադունին և յիշատակ հոգւոյ իմոյ.— Նոյն, էջ 193(58)։

12.— 1273.— Սուրբ Աստուած, սուրբ և հզաւր, սուրբ և անմահ, որ խաչեցար, ողորմեա տէր Յովաննէսի, ստացողի սմա, ամէն.— Նոյն, էջ 204(74)։

13.— 1273.— Կամաւն Աստուծոյ... վարդապետս Սարգիս, ապա ես Ախատէրս ու Թուզուքան հաւրքորդս, զմեր հայրենի այրիքն և զզնուածն զՊապանց այրին, և Զեւջանց տունն և զԴաւթի քիրենց հայրենաւքն,

---

թուի թէ թ. 93 և 94 արձանագրութեանց մէջ Գարքանեցոյի տեղ պէտք է կարդալ Գարբանեցոյ։ Նոյն տնունը թէեւ ուրիշ տեղ ալ կը կարդացուի Գարբանիէլ (էջ 264) և Գարբանգիէլ (էջ 279), տարակոյսի մատնելով ընթերցողը։

digitised by A.R.A.R.@

ի կոյսուցին Ս. Նշանիկ, ընծաեցաւ ի դրան տունն։ Տէր Յովանէսն և միաբանքն էառուն Ն պատարագ ի տանի առաքելոյն Բարդուղիմէոսին զամէն եկեղեցիքն։ Մեր կենդանութեան մեր հաւրն առնեն և յետ մեր ելից՝ մեզ։ Կատարողքն աւրհնին յԱստուծոյ։— Նոյն, էջ 196(60)։

14։— 1273։— Կամաւն Աստուծոյ, յիշխանութեան պարոն Սադունին, ի սէրութեան տէր Ոփանիսի, ես Յոհաննէս Քահանա և եղբարք իմ Յունան, Դաւիթ, Յոհան Միխիթար, կանդնեցաք զխաչ՝ ի զկամուրջս ի հիմանց, զիմ զնած էգին և զարան իմ խաչիս հէրենիք տի, որ ամէն ամի ասա ուրախանն և ասեն մեզ Աստուած ողորմի, և ծնողաց մեր և մնուցողաց։ Եւ ով խափանել չանա Ուղարի և կանի մասնակից է, Ի Թվիս ՉԻԲ։— Նոյն, էջ 258(176)։

15։— 1275։— Ի Թվին ՉԻԴ։ Շնորհաւք Տեառն Յիսուսի, ես Տէրտէրս և մայր իմ Խորասուն դանդնեցաք զնչան սուրբ խաչի յառաջնորդութեան տէր Յովաննէսի ի վերա հանդստարանի Արտահամի։— Նոյն, էջ 240(150)։

16։— 1278։— Շնորհաւք և ողորմութեամբ Աստուծոյ ես Միքայաեան ծառայ Ս. Նշանիս՝ եղբաւրդի տէր Յովհաննէսի, կոցեալ ընդ հովանեաւ Ս. Նշանիս, զիմ հոգս արդիւնս ի հալալ վաստակոց ընծաեցի ի Ս. Նշանս Եմիաբանքս, ԺԶ եղն, ԳԻ սպիտակ, յառաջնորդութեան տէր Յովաննէսի։ Եպիսկոպոս և միաբանքս սահմանեցին մեզ պատարագ զՅայտնութեան տնաւրինեցաւ աւրն զամէն զեկեղեցիքս մեզ պատարագել, մինչ մեք կենդանի ենք մեր հաւրն Գարբանելին և մաւրնցացին, յետ մեր ելից՝ Բ պատարագ իմ եղբաւրն Վաչէի, Ա Քաւթարա, Բ Աղբրադեղին, ու զայն մեզ առնեն Միքայաեանս։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ, և խափանողքն դատին ի Տեառնէ։ Ի Թվիս ՉԻԵ։— Նոյն, էջ 158(25)։

17։— Սիրոն Աստուծոյ միաբանեցաւ Ս. Ուխտիս Հաղբատա Մաթէոս քահանա և ամուսին իւր Հեղիկն։ Եւ մեք տէր Յովանէսս կամակցութեամբ եղբարցս տվաք զՈսկեանց տաւնին զամէն եկեղեցիքս նոցա պատարագել։ մինչ կենդանի են իւրենց ծնողացն առնեն և յետ ելից նոցա՝ կէսն Մաթէոսի և կէսն Հեղիկեան։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ։— Նոյն, էջ 159(26)։

18։— Կամաւն Աստուծոյ փափաքող եղեւ միաբանութեան Ս. Ուխտիս Անդրէաս քահանա և ամուսին իւր Թամթի, էառուն արդիւնս ըստ իւրեանց կարի, և մեք տէր Յովանէսս՝ լրմամբ եղբարցս սիրով ընկալաք և ամէնք նոցա պատարագ ի տաւնի Անդրէի տուաքելոյն զամէն եկեղեցիքս, որչափ ի կենդան են՝ իւրեանց ծնողացն առնեն և յետ փոխմանին իւրեանց՝ նոցա առնեն։ Կատարողքն աւրհնին յԱստուծոյ։— Նոյն, էջ 160(27)։

19։— Մեք յուսով ես աւագ Սարգիս միաբանեցաս Ս. Նշանիս, յառաջնորդութեան տէր Յոհաննէսի, և ըստ իմում կարի ընծաեցի Ս. Նշանիս Ս դահեկան։ Տէր Յոհաննէս և միաբանքս ընկալան և էառուն մեզ պատարագ զեղեղիկանն կիրակէն իմ հաւրն Խոսրովին և իմ եղբաւրն Քաւիմին։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ։— Նոյն, էջ 161(28)։

20։— Կամաւն Աստուծոյ ես մեղուցեալ Անդրէաս քահանայ անկայ ի դուռս ի կամ Թողիկէիս և եառս ընծա Ս. Նշանին ըստ իմում կարի։ Տէր Յոհաննէս և միաբանքս ընկալան և էառուն մեզ պատարագ զտաւնն Տիտոսի առաքելոյն։։— Նոյն, էջ 162(29)։

21։— Յուսաւք յԱստուծոյ Ս. Նշանիս Հաղբատա, Իւանէ աւագ քաղաքացի և ամուսին իւր Վարդենի, չատ արդեամբք միաբանեցան սուրբ ուխտիս, և մեք տէր Յովանէս լրմամբ եղբարցս սիրով ընկալաք և ըստ մեծի յուսոյն իւրեանց՝ տուաք նոցա զնոր կիրակէին Գ չաբաթն աւրն պատարագ զամէն և մեծ եկեղեցիքս։ Կատարիչք դրոյս աւրհնին յԱստուծոյ, և խափանողքն դատին ի Տեառնէ ամենայն։— Նոյն, էջ 146(6)։

22։— Կամաւք բարերարին Աստուծոյ, պատրոն Զեւանչերն և ամուսին իւր Տուլին միաբանեցան Ս. Ուխտիս Հաղբատա, և մեք տէր Յովանէս և եղբարքս տուաք նոցա ըստ Վարդա Պաշին տաւն պատարագ զամէն եկեղեցիքս։ որչափ կենդանի են ծնողացն առնեն և յետ իւրեանց ելից՝ նոցա պարտին անխափան։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ։— Նոյն, էջ 147(7)։

digitised by A.R.A.R.@

23.— Կամաւն Աստուծոյ պատրոն Աղփաւ և որդին իւր Դաւիթ մեծ յուսով միաբանեցան Ս. Ուխտիս Հաղբատա, և մեք տէր Յովաննէս լրմամբ եղբարցս, սիրով ընկալաք և տուաք նոցա պատարագ զտաւնն եկեղեցւո, որ Շողակաթ ասի, զամէն եկեղեցիքս։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ.— Նոյն, էջ 191(55)։

24.— Յուսովն Աստուծոյ միաբանեցաւ Ս. Նշանիս Հաղբատա Շահընշահ և իւր որդիւնս ըստ իւրում կարի, և մեք տէր Յովանէս և միաբանքս սահմանեցաք Ա պատարագ յամէն տարի ի տաւնի սրբոյն Աթանասի։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ։ Այլ և ըստ յուսոյ նորա տվաք տեղի գերեզմանի ի դրան եկեղեցոյս.— Նոյն, էջ 192(56)։

25.— Յուսովն Աստուծոյ և Ս. Նշանիս Հաղբատայ, մեք Գ եղբարքս՝ Սիանդարս և Աւհանդարս և Իսրայլս, միաբանեցաք և տուաք ընծայ ըստ մերում կարի, և տէր Յովաննէս և միաբանքս սահմանեցին և էտուն մեզ Ե պատարագ ի տաւնի Թէոդոսի Թագաւորի, որչափ մեք կենդանի ենք մեր ծնողացն առնեն՝ Գրիգորոյ և Սաթութին, և յետ մեր ելից յաշխարհէս, Գ մեզ և Բ նոցա։ Կատարողքն աւրհնին յԱստուծոյ.— Նոյն, էջ 192(57)։

26.— Կամաւն Աստուծոյ միաբանեցա Ս. Նշանիս Հաղբատա... և մեք տէր Յոհաննէս և միաբանքս սիրով ընկալաք... և սահմանեցաք Ե պատարագ ի տաւնի Մաթէոսի աւետարանչին։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ.— Նոյն, էջ 209(82)։

27.— 1279.— Կամաւ նախախնամողին Աստուծոյ հաւր, և յառաջնորդութեան տէր Յովաննէսի, ի թվիս Հայոց ՉԻԸ, ես Բարսեղ քահանայ կանգնեցի զսուրբ Զաւրավարքս, և շինեցի զխորանս լուսոյ յանուն սրբոցս մեծաւ ջանիւ և քրտնամուխ անձամբս իմով, ի փրկութիւն հոգոյ իմոյ և յիշատակ մեզ և ծնողաց մերոց և սնուցողացն.— Նոյն, էջ 246(167)։

28.— 1279.— Կամաւքն Աստուծոյ, ի տէրութեան պարոն Սադունին, և ի հայրապետութեան տէր Յովհաննէսի անյաղթ գիտնականի, մեք ծառայ սուրբ Նշանիս՝ Մանուէլ... Գրիգորէս, Յոհաննէս, կանգնեցաք զխաչս յանուն սրբոյն Սարգսի զաւրավարին, և տվաք գեղիս տեղի գերեզմանի մեր հերենի հոգէ յիշատակ մեզ։ Եւ որք երկրպագէք՝ սրբոյ Նշանիս յիշեցէք զմեզ և զծնողսն մեր և զհոգևոր զաւակն մեր ըզՊետրոս, զՊաւղոս, զՄանուէլ։ Թվիս ՉԻԸ.— Նոյն, էջ 265(25)։

29.— 1280.— Ի թվիս ՉԻԹ, յիշխանութեան տեղոյս Սադունին, ես Պածած, որդի Լիպարտի, և ամուսին իմ Դուղա, յազգէ Մամիկոնենից, միաբանեցաք Ս. Նշանիս Հաղբատա և զսուրբ Գրիգորի Լուսաւորչին, որ վկայաւք սուրբ նորա ճկոյթն առ մեզ էր նախնեաւք, զայն ի խնդրո եպիսկոպոսին և սուրբ միաբանացս ընծայեցաք ի սուրբ կաթողիկէիս և այլ արդիւնս։ Տէր Յովաննէս և միաբանքս սահմանեցին տաւն Ս. Գրիգորի ծակամուտին չարաթն աւրն և զշաբաթն և ըզկիրակէն զամէն եկեղեցեացս պատարագն մեզ առնեն։ Եւ էտուն մեզ տուն և այգի զինչ էլ միաբանի։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ.— Նոյն էջ 197(61)։

30.— 1285.— Ի թվիս ՉԼԴ կանգնեցաւ Խաչս ի նեղ և ի դառն ժամանակս թագաւորութեան Դեմետրի որդոյ Դաւթի, ի հայրապետութեան տեառն Յոհաննիսի՝ Թոռն Դաւիթին։ Ես Թոմա քահանայ և եղբայր իմ Տիրացու կանգնեցաք զամենափրկիչ յիշատակ հաւր մերոյ Գրիգոր քահանաի և մաւր մեր...։— Յովսէփեանց, Հաւուց Թառի Ամենափրկիչը, 1937, էջ 76։

31.— 1288.— ՉԼԷ թվիս, սիրովն Աստուծոյ միաբանեցան Ս. Ուխտիս Հաղբատայ՝ աւագերէցն Տփխեաց Տէրտէրն և ամուսին իւր Նազմելիք, հանդերձ որդովք իւրեանց, և ետուն ընծայ Ս. Նշանիս խաչ մի արծաթի և երկու նափորտ, և Լ դահեկան։ Եւ մեք տէր Յովանէս և միաբանքս սահմանեցաք նոցա պատարագ ի տաւնի սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի զամենայն եկեղեցիքս անխափան, և զտեղի առաջի գրիս, չիրիմ ի խնդրոյ արքազան վարդապետին Սոսթէնիսի։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ.— Ղաֆադարեան, Հաղբատ, էջ 205(76)։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@